

Սերգեյ Ն. Սարինյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ*

Բանալի բառեր – մեթոդ, էկզեգետիկա, կառուցվածքաբանություն, միֆոլոգիզմ, պոետիկա, փիլիսոփայություն, լեզվաբանություն:

Հանրագիտարաններում և գրականագիտական բառարաններում տեղեկագրություններ կան գրականագիտության մեթոդների մասին՝ տեսական ու կիրառական հատկանիշների բնութագրումներով: Եվ սակայն առարկայի ամբողջական համակարգ տակավին գոյություն չունի, որի նշանակությունը միանգամայն անհրաժեշտ է ուսանողության, ասպիրանտների և գրականագետ սերնդի համար: Այդ անհրաժեշտության գիտակցությամբ փորձել ենք ներկայացնել գրականագիտական մեթոդների ամբողջական համակարգը՝ հասկացության ժամանակակից ընկալմամբ: Որպես սկզբնաղբյուր ունեցել ենք փիլիսոփայական և գրականագիտական հանրագիտարանները, լրացնելով դրանք առարկայի իմացության արդի գիտական չափանիշներով:

Մեթոդի սահմանումը գրականագիտության տեսական առաջնակարգ հարցադրումներից մեկն է, և անկախ մեկնաբանական ուրույն տարբերակներից, ընդհանուր առմամբ համանշանակ է գիտակցվել նրա կիրառական բնույթը գիտությունների համակարգում: **Մեթոդ** հասկացությունը ծագում է հունական **methodus** հասկացությունից, որը բառացի նշանակում է «ուղի դեպի ինչ-որ մի բան»: Ուղղակի իմաստով մեթոդը այս կամ այն առարկայի ճանաչման իմացական միջոց է: Իր զարգացման ընթացքում մեթոդը կազմավորել է գիտական մտածողության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը՝ համապատասխան ածանցումներով:

Փիլիսոփայական հասկացությամբ՝ մեթոդը առարկայի գիտական իմացության միջոցներից մեկն է: «Մաքուր բանականության քննադատությունը» տրակտատում Կանտը հատուկ բաժին է հատկացնում մեթոդին («Трансцендентальное учение о методе»): «Երբ մեզ հայտնի է մաքուր և փորձնական բանականության մասին գիտելիքների ամբողջությունը, – գրում է

17
2017
հունվար-մարտ, 1 (57), հունվար-մարտ, թիվ 1 (57), հունվար-մարտ, 2017
համահայկական հանդես
վե՛ր

* Հոդվածն ընդունվել է տպագրության 01.03.2017:

Կանտը, – արդեն կարող ենք կազմել «շենքի» (մեթոդի) կառուցման պլանը... կանոնակարգը, արխիտեկտոնիկան, ապա նաև մաքուր բանականության պատմությունը»¹: Գիտության յուրաքանչյուր բնագավառ ունի իր մասնավոր մեթոդը, որը մշակում է տվյալ գիտության իմացական համակարգը: Բոլոր կարգի մասնավոր մեթոդների հիմքում ընկած է օբյեկտիվ իրականության իմացության մատերիալիստական դիալեկտիկայի օրենքը՝ ի հակադրություն մետաֆիզիկական իդեալիզմի:

Մեթոդի գիտակցությունը սկիզբ է առնում Պլատոնի և Արիստոտելի գեղագիտական դրույթներից, որպես արվեստի և գրականության մեջ «բնության նմանողության» սկզբունք: Միջնադարում և հետագա ժամանակներում ընդլայնվում է «բնության նմանողության» դրույթը՝ մի դեպքում արտահայտելով գրողի աշխարհայացքի մեկնակետը կյանքի երևույթների հանդեպ, մյուս կողմից՝ գրական ուղղության գեղագիտական համակարգի պոետիկան՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն:

Գեղագիտական դրվածքով մեթոդը երկակի իմաստ ունի՝ գիտական և գրական-ստեղծագործական: Գրական ստեղծագործական մեթոդը նույնանում է գրական ուղղությունների և հոսանքների հետ՝ ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ, ֆուտուրիզմ և այլն: Իր հերթին մեթոդը ուղղություններ է ձևավորում նաև գրականագիտության մեջ՝ պատմական, կենսագրական, կուլտուր-պատմական և այլն:

Կարելի է ասել, որ գրականության ծագման հետ ձևավորվել են նաև վերլուծելու և մեկնաբանելու մեթոդները: Եվ սակայն մեթոդ հասկացությունը իբրև տեսական ըմբռնում և համակարգ, առաջացել է ավելի ուշ, այսպես կոչված պատմականության կատեգորիայի ձևավորման հետ: Այս իմաստով Պլատոնի, Արիստոտելի, Հորացիուսի, Դիոնիսիոս Թրակացու գեղագիտական հայացքներով կազմավորված էկզեգետիկան և քերականական դպրոցը գրական մեթոդի նախապատմություն կարելի է համարել:

Էկզեգետիկա. – նախապես ձևավորվել է որպես աստվածաբանության մեկ բաժին՝ հին և նոր կտակարանների պատմության և բնագրերի մեկնությամբ: Էկզեգետիկան հոմանիշ է հերմենևտիկային և տեքստաբանական ուղղություն ունի: Ծագում է հունական նույնանուն՝ մեկնություն հասկացությունից: Էկզեգետիկան գիտություն է գրական երկի բնագրի ռեկոնստրուկցիայի և սկզբնաղբյուրի ձգգրտման մասին: Ալեքսանդրիայի բանասիրական մեթոդներից է և գրեթե չի օգտագործվում արդի գրականագիտության և լեզվաբանության մեջ:

Աստվածաբանական էկզեգետիկայի առաջին ընդհանրացնող աշխատությունը աստվածաբան, փիլիսոփա Ավրելիոս Օգոստինոսի (354-430) «Քրիստոնեական գիտություն կամ Սրբազան հերմենևտիկայի հիմունքներն ու եկեղեցական ճարտասանության արվեստը» երկն է:

Քերականական դպրոց. – Կազմավորվել է Ալեքսանդրյան դպրոցի ավանդույթների հիման վրա 3-4-րդ դարերում, տեքստաբան-բանասեր Արիստարքոսի (217-145) գործունեությամբ: Քերականական դպրոցի հիմնադիրը մեր թվարկությունից առաջ երկրորդ դարի խոշոր գիտնական Դիոնիսիոս Թրակացին է (169-89) «Քերականական արվեստ» աշխատու-

¹ Кант Иммануил. Сочинение. Том 3. М., 1964, с. 595.

թյամբ: Հինգերորդ դարում թարգմանվել է հայերեն՝ ձևավորելով լեզվաբանաէսթետիկական ուղղություն ամբողջ միջնադարում: Քերականական դպրոցի ականավոր դեմքերն էին Դավիթ Քերականը, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին, Եսայի Նչեցին և ուրիշներ: Դպրոցի ներկայացուցիչները քերականությունը բարձր էին դասում փիլիսոփայությունից: Քերականների ուսմունքը ներառում էր նաև գեղարվեստական գրականության քննադատությունը, որ նրանք անվանում էին «Դատումն քերդածաց»: Հայ քերականները քերթողական արվեստի հարցերը լուսաբանում էին տեսականորեն, առանց բնագրային վերլուծության և գրական սեռերի (ողբերգություն, կատակերգություն, վիպերգություն, բանաստեղծություն) պոետիկայի հարցերը սահմանում էին ըստ Արիստոտելի և Դիոնիսիոս Թրակացու էսթետիկայի:

Կլասիցիզմ. – Տեսականորեն գիտակցված առաջին գրական մեթոդն է: Ձևավորվել է 17-րդ դարակզբին Ֆրանսիայում և հարատևել է շուրջ երկու դար, մինչև 19-րդ դարի 20-ական թվականները:

Կլասիցիզմի գեղագիտական նորմատիվը հին հունահռոմեական գրականությունն է, այն համարելով բարձրագույն ձև՝ կլասիկա (դասական): Այստեղից էլ մեթոդի անունը՝ *classicus*: Ընդօրինակման հանգամանքը հիմք է հանդիսացել այն անվանելու նաև «կեղծ կլասիցիզմ»:

Կլասիցիզմը՝ որպես գրական ուղղություն, լայն տարածում գտավ եվրոպական գրականության մեջ՝ Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Իսպանիայում և այլուր: Կլասիցիզմի ականավոր դեմքերն էին Կոռնելը, Ռասինը, Տասոն, Միլիերը և ուրիշներ: Կլասիցիզմի նախասիրած ժանրերն էին բանաստեղծությունը, դրամատուրգիան, վիպերգը: Կլասիցիզմը գիտականացրեց գրականությունը, ստեղծեց օրենքներ, որոնք կազմավորում են գրական երկի ձևն ու բովանդակությունը: Կլասիցիզմի տեսաբանը Նիկոլո Բուալոն է, որը «Քերթողական արվեստ» (1674) չափածո ստեղծագործությամբ կանոնակարգեց գրական մեթոդի պոետիկան: Կլասիցիզմը կանոնակարգեց բանաստեղծության նոր չափաբերությունը՝ անջատելով այն միջնադարյան տաղերգությունից, վիպերգում վավերացրեց հոմերական չափը, դրամատուրգիայում սահմանեց երեքի միասնության օրենքը՝ Տեղի, Ժամանակի, Գործողության: Կլասիցիզմի իմացաբանական ելակետը բանականությունն է, ճշմարտությունը գիտակցվում է բանականությամբ, այն ինչ իրական է, բանական է: Կլասիցիզմի գեղագիտական չափանիշը վեհն է, վսեմը և կատարյալը: Այս իմաստով այն մարդկային զգացողություններն ընկալում է բարձրագույն ձևի մեջ՝ որպես գաղափար, կամքի դրսևորում, որպես գաղափարական կամ բարոյական կատեգորիա, ինչպես, օրինակ՝ ազատությունը, հայրենասիրությունը, անձնագոհությունը, հերոսականությունը և այլն: Ըստ ռժի՝ կլասիցիզմի սկզբունքը «բարձրագույն ճաշակն է», լեզվի, կառուցվածքի բարձր ներդաշնակությունը: Գեղեցկության և ներդաշնակության սկիզբ համարելով Տիեզերքը, կլասիցիզմը գեղագիտական չափանիշ էր համարում «բնության նմանությունն» ու բազմերանգությունը:

Հայ գրականության մեջ կլասիցիզմը սկզբնավորվել է 18-րդ դարակզբին և հարատևել է մինչև 19-րդ դարակեսը: Իր բովանդակությամբ

հայկական կլասիցիզմը ազգային էր: Մինչդեռ եվրոպական կլասիցիզմը իր սյուժեներն առնում էր հունա-հռոմեական անտիկ մշակույթից, հայկական կլասիցիզմը որպես աղբյուր ուներ հայոց առասպելապատմական հնությունը: Հայկական կլասիցիզմի առաջին տեսաբանը Խաչատուր Էրզրումցին է, որն իր «Համառոտական իմաստասիրություն» (1711) երկհատոր աշխատության մեջ բաժին է հատկացրել նաև պոեզիայի պոետիկայի հարցերին: Կլասիցիզմի տեսությանն անդրադարձել են նաև Մխիթար Սեբաստացին, Ստեփանոս Ազոնցը, Սարգիս Տիգրանյանը և ուրիշներ: Կլասիցիզմի ամբողջական համակարգված տեսությունը Էդվարդ Հյուրմուզյանի «Առձեռն բանաստեղծություն» ձեռնարկն է, որը բացառիկ արժեք է ներկայացնում հայ քննադատական մտքի պատմության մեջ: Հայկական կլասիցիզմի առաջատար ժանրերն են բանաստեղծությունը (Մանուել Զախջալյան, Եղիա Թովմաճան, Գաբրիել Ավետիքյան, Էդուարդ Հյուրմուզյան), վիպերգը (Վանանդեցի), դրամատուրգիան (Պետրոս Մինասյան): Հայկական կլասիցիզմի բարձրակետը Արսեն Բագրատունու «Հայկ Դյուցազն» վիպերգն է:

Գրական ուղղություն լինելով հանդերձ, կլասիցիզմը նաև գրականագիտական մեթոդ է, սակայն դրույթը հիմնավորելու համար անհրաժեշտ է կլասիցիզմի մշակութաբանական գործունեությունը դիտել համակողմանի ընդգրկումներով՝ պատմական, լեզվաբանական, թարգմանական և այլն: Կլասիցիզմը գիտական նոր մեթոդաբանությամբ համակարգեց հայոց պատմությունը (Չամչյան), նորոգեց հայ մշակույթի զարգացման ուղիները և առաջադրեց գաղափարական ու գեղագիտական սկզբունքներ, որոնք յուրովի դրույթներ նշանավորեցին հետագա գրականագիտական մեթոդների գեղագիտական տեսություններում:

19-րդ դարասկզբին որոշակի առաջընթաց է տեղի ունենում գրականության ուսումնասիրության ասպարեզում: Ձևավորվում են գրականագիտական մեթոդներ, որոնք տարբերակում են գրականագիտությունը հումանիտար այլ գիտությունների համակարգում: Ճշմարիտ է՝ գրականագիտությունը տակավին որոշարկվում է այլ գիտությունների համատեքստում՝ պատմություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա և այլն, այնուամենայնիվ ինքնորոշվում են միայն գրականագիտությանը յուրահատուկ մեթոդներ՝ կենսագրական, պատմական, դիցաբանական:

Կենսագրական մեթոդ. – Հիմնադիրը ֆրանսիացի գրող, գրականագետ-քննադատ Սենտ Բյովն է, որը «Գրական-քննադատական դիմանկարներ» (1836–39) բազմահատոր աշխատության մեջ գրողի (Կոռնել, Բուպո, Լաֆոնտեն և ուրիշներ) ստեղծագործությունը քննաբանում է կենսագրական ատաղձի հիման վրա, միաժամանակ զուգահեռելով այն հասարակական միջավայրի, սոցիալական հանգամանքների և փիլիսոփայական ժամանակի հարցադրումներով: Կենսագրական մեթոդի վերլուծական սկզբունքները հետագայում կիրառելի դարձան գրականագիտության համակարգում՝ ավելի կատարելագործվելով ու ազատվելով կողմնակի հավելումներից:

Հայ գրականագիտության մեջ կենսագրական մեթոդը լայն կիրառություն է ստանում 19-րդ դարի 90-ական թվականներին (Հ. Շահնազարյանի «Խաչատուր Աբովյանի հասարակական ու գրական գործունեությունը», Ն. Տեր-Կարապետյանի «Խաչատուր Աբովյան», Ե. Շահազիզի «Մի-

քայլ Ղազարյան Նալբանդյանց», Ա. Երիցյանի «Գրիգոր Արծրունի...», Ի. Հարությունյանի «Ստեփանոս Պալասանյան», Ա. Չոպանյանի «Պետրոս Դուրյան. կենսագրական և քննադատական ուսումնասիրություն» և այլն):

Կենսագրական մեթոդը արդի գրականագիտության վերլուծական առաջատար մեթոդներից է: Այդ ուղղության գրականագիտական ուսումնասիրություններից են Արամ Ինձիկյանի «Հովհաննես Թումանյան. կյանքը և գործը», Պիոն Հակոբյանի «Խաչատուր Աբովյան. կյանքը և գործը», Ալմաստ Զաքարյանի «Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը» աշխատությունները:

Պատմական մեթոդ. – Ծագել է 19-րդ դարասկզբին և առնչվում է գրականության և արվեստի ժամանակակից ուղղության հետ: Անցումը կլասիցիզմից ժամանակակից էական բեկում նշանավորեց նաև պատմագրության բնագավառում: Հակառակ լուսավորիչների պատմական նիհիլիզմի՝ ժամանակակից հայտնաբերեց պատմության ուսանելիությունն ու արժեքայնությունը: Պատմությունն անջատվում է աստվածաբանական կաղապարից և ստանում քաղաքակրթական, հասարակական բովանդակություն: Այստեղ էական դեր է հատկացվում նաև բանահյուսությանը, որը ներկայանում է որպես ազգային ինքնության հիմունք և պատմության խորհրդանիշ: Շեկլինգի, Բոբլի և Հերդերի դրույթները փոխակերպում են պատկերացումները պատմության վերաբերյալ, պատմությունը ձեռք է բերում մեթոդաբանական սկզբունք գիտությունների համար: Ըստ այդ մեթոդի՝ գրականությունը դիտվում է որպես պատմություն: Մեթոդը առավելապես կիրառվում է գրականության պատմագրության մեջ, որպես պարբերացման սկզբունք: Մեթոդի բանաձևն է. «Ինչպես ազգի պատմությունն է, այդպես է և նրա գրականությունը»: Հայ գրականագիտության մեջ պատմական մեթոդի հետևորդներ են Ստեփանոս Նազարյանը, Գարեգին Զարբեհանյանը, Հովսեփ Գաթրոճյանը և ուրիշներ:

Պատմական մեթոդը՝ որպես գրականագիտական հետազոտության եղանակ, շարունակություն չունեցավ, բայց պատմականությունը հիմնական գործոն դարձավ գրեթե բոլոր մեթոդների համար, հատկանշելով տվյալ առարկայի ժամանակի և տարածության սահմանը:

Պատմականությունը մեթոդի հետագա զարգացման ընթացքում կազմավորել է տեսություններ, որոնք ուղղություն են տվել հետազոտական ուրույն եղանակների: Այդպես է, օրինակ, **պատմատիպոլոգիական** տեսությունը, որ հատկապես վերաբերել է ֆոլկլորի (բանահյուսություն) ուսումնասիրությանը: Տեսության գիտական խնդիրն է ուսումնասիրել տիպաբանական ընդհանրությունը այլևայլ ժողովուրդների բանահյուսության սյուժեների, ժանրերի, կերպարների կառուցվածքում՝ պայմանավորված այդ ժողովուրդների կենցաղավարության, պատմական զարգացման և գենետիկական այլ գործոնների հետ: Այս տեսության հիմնադիրներն են Վ. Ժիրմունսկին, Պրոպր, Ի. Տրոնսկին և ուրիշներ:

Գրականագիտության բաժիններից է նաև գրականության **պատմաֆունկցիոնալ** էության հետազոտությունը՝ խորապես բացահայտել գրական երկի գաղափարն ու աշխարհայացքը, գեղագիտական առանձնահատկությունն ու ընկալման խորությունը, հոգեբանական ու էմոցիոնալ

ներագրեցությունը, գրականության արդիական նշանակությունը:

Միֆոլոգիական մեթոդ. – Ծագումը համընկնում է ժողովրդական առաջացման հետ: Նրա տեսության հիմքը բանահյուսության գիտական ուսումնասիրությունն է: Միֆոլոգիական մեթոդի փիլիսոփայական և բանագիտական հիմունքը Շելլինգ և Շլիգել եղբայրների տեսությունն է: Ըստ այդ տեսության մտածական ձևը սկզբնապես եղել է բանաստեղծությունը (միֆոլոգիան), որից արտածվել են գիտության և գեղարվեստի մյուս ձևերը: Այս իմաստով յուրաքանչյուր ազգային գրականության հիմքը բանահյուսությունն է: «Արվեստի փիլիսոփայությունը» աշխատության մեջ Շելլինգը հիմնավորում է, որ միֆոլոգիան նախահիմք է ամեն մի արվեստի: Միֆոլոգիզմը լայն տարածում է գտել եվրոպական երկրներում, հիմք հանդիսանալով ժողովուրդների լեզվի և բանահյուսության ուսումնասիրության: Հայ գրականության մեջ միֆոլոգիզմի հետևորդներ էին Մկրտիչ Էմինը և Ստեփանոս Պալասանյանը:

Միֆոլոգիզմը բանահյուսական ավանդույթների զուգահեռի վրա առնչվում է նաև բնության երևույթների մեկնություններին և այս իմաստով հիմք է տալիս բազմապիսի հետազոտական փորձերի, այսինքն՝ միֆոլոգիզմը ստեղծում է գիտական իր համակարգը:

20-րդ դարում ձևավորվում է նեոմիֆոլոգիզմի տեսությունը, որի փիլիսոփայական հիմքը Կառլ Յունգի ուսմունքն է արքետիպի մասին: Արքետիպը նախամարդու կոլեկտիվ անգիտակցականության պատկերացումն է երևույթների դեմոնական կամ մոգական (կախարդական) բնույթի մասին: Նեոմիֆոլոգիզմի տեսությամբ բանահյուսական-հեքիաթային սյուժեներում միֆը հանդես է գալիս որպես արքետիպի սիմվոլ (խորհրդանիշ): Նեոմիֆոլոգիզմը լայն ասպարեզ ունի ինչպես համաշխարհային, նույնպես և արդի հայ գրականագիտական ուսումնասիրություններում:

Այսպիսով, համակարգելով միֆոլոգիական մեթոդի պատմական ուրվագիծը, կարելի է ասել, որ մինչև 19-րդ դարը միֆը և գրականությունը անբաժանելի միասնություն են կազմում: 19-րդ դարում պոզիտիվ գիտությունների զարգացման հետևանքով տեղի է ունենում դեմիֆոլոգիզացիա, ի հայտ բերելով նախապատմական մտածողությամբ անձնավորված բնական երևույթների իրական բովանդակությունը: 20-րդ դարը նշանավորում է միֆոլոգիզմի վերածնունդ գրականության մեջ: Ստեղծագործական ձևույթ է ստանում միֆաստեղծումը (Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան», Մարկեսի «Հարյուր տարվա մենություն», Ֆ. Կաֆկայի «Փոխակերպություն», Պ. Ջեյթունցյանի «Արշակ Երկրորդ», Ս. Խանգադյանի «Թագուհին հայոց», Գ. Խանջյանի «Շարժասանդուղք» և այլն):

Կուլտուր-պատմական մեթոդ. – 1865-ին լույս է տեսնում ֆրանսիացի փիլիսոփա, գրականագետ Իպոլիտ Թենի «Գեղարվեստի փիլիսոփայություն» աշխատությունը (հայերեն թարգմանությունը 1936-ին), որը հեղաշրջում էր համաշխարհային գրականագիտական մտքի պատմության մեջ: Թենը գրական նոր շարժման՝ նատուրալիզմի նախակարապետը եղավ և կուլտուր-պատմական մեթոդի հիմնադիրը: Ըստ Թենի՝ գրական ստեղծագործությունը ճանաչելի է երեք չափումով՝ **Ռասա, Միջավայր, Ժամանակ**: Այս երեքի միասնության մեջ արտացոլված են գրական ստեղծա-

գործության ազգային, սոցիալական և անհատական համարժեքները: Թե-նի տեսությունը իր մեջ կրում է Օգյուստ Կոնտի պոզիտիվիզմի և Հերբերտ Սպենսերի էվոլյուցիոնիզմի ազդեցությունը: Կուլտուր-պատմական մեթոդը լայն ճանաչում գտավ գրականության պատմագրության և գրական քննա-դատության ասպարեզներում: Նա ունեցավ այնպիսի ականավոր հետևորդ-ներ, ինչպիսիք են Գ. Բրանդեսը, Ֆ. Բրյունտերը, Գ. Լանսոնը և ուրիշներ: Ժամանակին այն հիմնավոր աղբյուրներից մեկը հանդիսացավ Մանուկ Աբեղյանի համար «Գրական դպրոցներ» աշխատության տեսական դրույթ-ներում: Կուլտուր-պատմական մեթոդը ամենակենսունակն է գրականագի-տական մեթոդների մեջ և ունեցավ հարատև ընթացք, շարունակելով կի-րառական իր նշանակությունը այլևայլ մեթոդների առկայության պայման-ներում: Կուլտուր-պատմական մեթոդի որոշ սկզբունքներ (սյուժեի, կա-ռուցվածքի և երեքի միասնության օրենքի վերաբերյալ) որպես նորմատիվ-ներ փոխանցվում են այլ մեթոդների վերլուծական փորձառությանը: Կուլ-տուր-պատմական մեթոդը համադրական վերլուծության մեթոդի գլխավոր քաղաղրիչն է:

Հայ գրականագիտության մեջ կուլտուր-պատմական մեթոդի հե-տևորդներն էին Մ. Աբեղյանը, Ա. Չոպանյանը, Ն. Աղբալյանը, Ա. Հարու-թյունյանը, Հ. Ասատուրը և ուրիշներ:

20-րդ դարասկզբին տեղի է ունենում, այսպես ասած, «մեթոդների հեղափոխություն»: Ձևավորվում են գեղարվեստական երկի գիտական մեկնության բազմաթիվ նոր մեթոդներ՝ սոցիոլոգիական, մարքսիստական, ֆորմալիստական, հոգեբանական, հոգեվերլուծական, կառուցվածքային, լեզվաբանական և այլն:

Սոցիոլոգիական մեթոդ. – Գրականության հասարակական առնչույ-թյունների գաղափարը առկա էր դեռևս Պլատոնի և Արիստոտելի գրական հայացքներում, սակայն սոցիոլոգիզմն իբրև գիտություն, ձևավորվում է 19-րդ դարի կեսերին՝ Օգյուստ Կոնտի տեսությամբ:

Թեև գրականության սոցիոլոգիական առնչությունը գիտակցել են 19-դարում, այնուամենայնիվ որպես գրականագիտական մեթոդ ինքնո-րոշվում է 20-րդ դարասկզբին: Սոցիոլոգիական մեթոդը գրականությունն ուսումնասիրում է որպես սոցիալական երևույթ, թե ծագումնաբանական և թե կիրառական նշանակությամբ: Սոցիոլոգիական մեթոդը ամենա-տարբեր մեկնություններով դարձավ գրականագիտության հետազոտա-կան մեթոդներից մեկը: Ամենից ավելի այն ասպարեզ գտավ մարքսիզմի մեկնությամբ, որի հիմունքները տեսականորեն մշակվել էին գրականու-թյան ու արվեստի մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ասույթներում: Մարք-սիստական սոցիոլոգիայի նշանավոր դեմքերն էին Ֆ. Մերինգը, Պ. Լա-ֆարգը, Գ. Պլեխանովը: Մարքսիստ սոցիոլոգները իրենց մեթոդն անվա-նում էին «գենետիկ մեթոդ»: Հայ իրականության մեջ սոցիոլոգիական մե-թոդի հետևորդներ էին Հ. Սոլովյանը, Բ. Իշխանյանը, Դ. Ասանունը և ուրիշներ: Հայ գրականության մարքսիստական ուսումնասիրության փոր-ձերից է «Գարուն» ավանսխար:

Սոցիոլոգիական մեթոդը 20-ական թվականներին ծայրահեղության մեջ հանգում է գռեհիկ սոցիոլոգիզմի: Հետազոտության սկզբունք է առա-

ջադրում «սոցիալական դոմինանտի» և «դասակարգային էկվիվալենտի» տեսությունը: Մեթոդի ակննավոր դեմքերն էին Վ. Պերեվերզևը և Վ. Ֆրիչեն: Հայ գրականագիտության մեջ պերեվերզևյան տեսության հետևորդ էր Արսեն Տերտերյանը: «Գրական ոճի սոցիոլոգիան», «Ֆրիչեն իբրև քննադատ» հոդվածներում և «Հայոց նոր գրականության պատմություն» պրակներում նա տեսականորեն հիմնավորում և գրականության ուսումնասիրության սկզբունք է առաջադրում գռեհիկ սոցիոլոգիզմը:

Մարքսիստական մեթոդ. – Մարքսիստական մեթոդի գեղագիտական ու իմաստաբանական հիմունքներն առաջադրել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գրականության ու արվեստի մասին ասույթներում, բազիսի ու վերնաշենքի հարաբերության սահմանագծում: Գրականագիտության մեջ մարքսիստական մեթոդի ծագումնաբանական ու իմացաբանական ելակետը մարդու և հասարակության հոգևոր կազմույթի վերաբերյալ արտադրական հարաբերությունների պատմական զարգացման ընդհանուր դրույթն է: Կեցությունն է որոշում գիտակցությունը: Մարքսիստական մեթոդի հետևորդներն են Ֆ. Մերինգը, Պ. Լաֆարգը, Գ. Պլեխանովը և ուրիշներ: 1910-ական թվականներին մարքսիստական մեթոդը տրոհվում է պլեխանովյան և լենինյան ուղղությունների: Մերժվում է բազիսի և վերնաշենքի նույնացման պլեխանովյան տեսությունը, առաջնությունը հատկացնելով գրականության կուսակցականության լենինյան դրույթին: Այս ուղղության հետևորդներն էին Ա. Լունաչարսկին, Մ. Օլմինսկին, Վ. Վորովսկին, Պ. Կոզանը: Նույն իրողությունը տեղի է ունենում նաև հայ գրականագիտության մեջ: Պլեխանովյան թևի գրականագետ-քննադատներին (Հ. Սուրխաթյան, Բ. Իշխանյան, Ց. Խանգադյան, Հ. Սոլովյան, Պ. Մակինցյան, Թ. Ավդալբեգյան) զուգահեռ գործում էր նաև մարքսիստական-լենինյան գրականագիտության թևը՝ Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Ա. Կարինյան, Ալ. Մյասնիկյան:

20-ական թվականներին և մինչև խորհրդային կայսրության փլուզումը մարքսիստական մեթոդը, այլևայլ մեկնություններով, հռչակվում է որպես խորհրդային գրականագիտության միակ և անփոխարինելի մեթոդը: Իր գոյության ընթացքում մարքսիստական մեթոդը արգասավորվում է հետազոտական լայն հնարավորություններով և նշանավորվում որպես գրականագիտական համաշխարհային առաջատար մեթոդներից մեկը:

Ստալինի մահից հետո կազմալուծվում են արտասահմանյան երկրների կոմունիստական կուսակցությունները և բնականաբար արժեզրկվում է նաև գրականագիտության մարքսիստական մեթոդը: Նրա առաջատար դեմքերը (ինչպես, օրինակ՝ ֆրանսիացի գրականագետ Ռոլան Բարթը) ասպարեզ են գտնում հետազոտական այլ մեթոդներում՝ հատկապես նախընտրելով «Նոր քննադատությունը» (ստրուկտուրալիզմը):

Սոցիալիստական ռեալիզմ. – Խորհրդային գրողների առաջին համագումարը 1934 թվականին էական բեկում նշանավորեց մշակույթի պատմության հետագա զարգացումների համար: Մարքսիմ Գորկու ասույթն այն մասին, թե անցյալի մշակույթի ստեղծման հարցում գերազնահատված է բուրժուազիայի դերը, ազգային մշակույթի և գրականության ստեղծումներում առաջնային է համարում ժողովրդի գործոնը: Հատկապես ընդ-

գծվում է բանահյուսության դերը մշակույթի պատմության ազգային ակունքերի բացահայտման գործում: Վերջակետ է դրվում գեեհիկ սոցիոլոգիզմի հետազոտական մեթոդին և խորհրդային գրականության և արվեստի ուղղություն է հռչակվում սոցիալիստական ռեալիզմը: Հասկացությունը ներառում է նաև հավելյալ բնորոշումը՝ հեղափոխական ժամանակում:

Նույն սկզբունքով սոցիալիստական ռեալիզմը հետազոտական մեթոդ է ճանաչվում նաև գրականագիտության և քննադատության համար: Անկախ մի որոշ ազատականացումից՝ մեթոդը գաղափարայնացված ու կուսակցականացված է, որի տեսական-փիլիսոփայական հիմունքը մարքսիզմ-լենինիզմն էր:

Ստալինի մահից հետո մեթոդի հետազոտական շրջանակները անհամեմատ ընդլայնվում են, հարստանում է այլևայլ մեթոդների վերլուծական եղանակներով և առաջատար սկզբունք է ճանաչվում օբյեկտիվ-գիտական վերլուծությունը:

Հոգեբանական մեթոդ. – Գրականագիտության և արվեստագիտության մեջ հոգեբանական մեթոդը ձևավորվել է 19-րդ դարի 70-ական թվականներին: Մեթոդի իմացաբանական հիմքը հոգեբանական գիտության ձևակերպումն է որպես իրականության ճանաչման միջոց: Եթե աշխարհը ճանաչելի է զգացմունքով, ապա գրականության երևույթը բացատրելի է հոգեբանական գործոնով: Գրական երկը, ըստ հոգեբանական դպրոցի տեսության, ամենից առաջ գրողի հոգեբանական վիճակի արտացոլումն է: Պոեզիան հուզական մոտիվներով ոչ այլ ինչ է, եթե ոչ բանաստեղծի հոգեբանական վերապրումների արձագանքը: Նույնը, այլևայլ միջնորդությամբ, նաև գեղարվեստական արձակում է և դրամատուրգիայում:

Հոգեբանական մեթոդը, ի հակակշիռ գերմանական փիլիսոփայական էսթետիկայի (Կանտ, Հեգել, Շելլինգ) և Օ. Կոնտի ու Զ. Միլի պոզիտիվ սոցիոլոգիայի, ներառում է Սենտ Բյովի կենսագրական և Ի. Թենի կուլտուր-պատմական մեթոդների վերլուծական սկզբունքները:

Հոգեբանական դպրոցը լայն տարածում ունեցավ եվրոպական և ռուսական գրականագիտության մեջ: Մեթոդի գիտատեսական սկզբունքները արտահայտություն գտան Մյուլեր-Ֆրեյենֆելսի, Ա. Պոտերնայի, Դ. Օվսյաննիկով-Կուլիկովսկու, Վ. Վունդտի, Է. Բերտրամի, Է. Գրոսի և այլոց ուսումնասիրություններում:

Հայ գրականագիտության մեջ հոգեբանական դպրոցի հիմնադիրը Արսեն Տերտերյանն է, հայ գրողների՝ Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Լ. Շանթի, Մուրացանի, Նար-Ռոսի, Շիրվանզադեի, Նալբանդյանի մասին մատենաշարով: Հոգեբանական մեթոդի հետևորդներ էին նաև Մ. Բերբերյանը, Վ. Նալբանդյանը և այլ քննադատներ:

Հոգեբանական մեթոդը գրականագիտության հիմնարար մեթոդներից է, գրական ստեղծագործության վերլուծության գլխավոր եղանակներից մեկը և լայն կիրառություն ունի արդի գրականագիտության մեջ:

Հոգեվերլուծական մեթոդ. – Մեթոդը ձևավորվել է 20-րդ դարասկզբին: Հոգեբանական դպրոցի հետ ընդհանրությամբ հանդերձ գրակա-

նագիտության մեջ այն սոցիալական, փիլիսոփայական և իմացաբանական իր առանձնահատկությունն ունի: Եթե հոգեբանական մեթոդը գործ ունի մարդու սոցիալական ոլորտի հետ (սեր, ընտանիք, խանդ, բարոյականություն և այլն), ապա հոգեվերլուծությունը գործ ունի կենսաբանական (բիոլոգիական) ոլորտի հետ:

Հոգեվերլուծության (պսիխանալիզ) հիմնադիրը ավստրիացի բժիշկ, նյարդաբան և փիլիսոփա Զիգմունդ Ֆրեյդն է: Ֆրեյդը հոգեբանական բոլոր կարգի ռեֆլեքսները անջատում է արտաքին կարգի բոլոր ազդեցություններից և հատկացնում նախապես տրված անգիտակցությանը: Ըստ Ֆրեյդի, բոլոր կարգի հոգեբանական վիճակներն ու մարդկային գործունեությունը, ապա նաև պատմական ու հասարակական երևույթները թելադրված են անգիտակցական մղումներով և ամենից առաջ սեքսուալ հակումներով (լիբիդո): Անգիտակցականության հոգեբանական այս օրենքով են կարգավորված մարդկության պատմությունը, պետությունը, կրոնը, բարոյականությունը, գրականությունն ու արվեստը:

Հոգեվերլուծության հիմնադիր տեսաբաններից էր նաև շվեյցարական հոգեբան և փիլիսոփա Կառլ Գուստավ Յունգը: Նախապես ընդունելով Ֆրեյդի տեսությունը՝ Յունգը վերանայում է այն է. Հարտմանի «անգիտակցական փիլիսոփայություն» ուսմունքի ազդեցությամբ, Ֆրեյդի երազանքի. միֆի մեխանիկան, մտածական այլաբանությունը փոխաձևելով արքետիպի սիմվոլիկ (խորհրդանիշի) բովանդակությամբ: Յունգի տեսության հիմքը երկու հասկացություններ են՝ արքետիպը և «կոլեկտիվ անգիտակցականությունը»: Մարդու ենթագիտակցական պատկերացումների մեջ էական տեղ ունեն միֆական և բանասիրական սկզբունքներից եկող պատկերացումները:

Հոգեվերլուծությունը արդի գրականագիտության և արվեստագիտության հիմնական մեթոդներից է:

Հերմենևտիկա. – Հերմենևտիկ մեթոդը ընդհանուր դրվածքով տեքստաբանական հետազոտության եղանակ է: Մեթոդի հիմնադիրը 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի գերմանացի բողոքական աստվածաբան, փիլիսոփա Ֆրիդրիխ Դանիել Շլայերմախերն է, որի հայացքների համակարգը ներհյուսված է Սպինոզայի, Կանտի, Ֆիխտեի, Շելլինգի, Յակոբիի գաղափարներով: Մեթոդը անվանված է ըստ Բեռլինի համալսարանում կարդացած «Հերմենևտիկա» դասընթացի: Հասկացության առարկան ձևաբանված է հին հունական դիցաբանությունում օլիմպական աստված Հերմեսի անունով, որը առեղծվածային բազմաշնորհ ունակությունների հետ կոչվել է նաև օլիմպական աստվածների լրաբեր, մունետիկ, հովանավոր, պահապան, ապա նաև կախարդական արվեստի խորհրդանիշ: Վերծանելով հին ու նոր կտակարանները, Շլայերմախերը հերմենևտիկան համադրել է տեքստաբանական ուսմունքի հետ, սկզբունք ընդունելով բնագրային ճշգրտությունը՝ ստուգաբանել հեղինակի անհատականության հիմնավոր իմացությամբ: Այս իմաստով հերմենևտիկան աղերսվում է էկզեգետիկայի և Սենտ Բյովի կենսագրական մեթոդին: 19-րդ դարում մեթոդը ստանում է բանասիրական քննաբանության ուղղություն, հետամուտ լինելով տեքստի միջոցով գրական երկի ծագումնաբանության ու հեղինակի

ինքնության բացահայտմանը: Հերմենևտիկան որպես գիտական մեթոդ գրական երկի բնագիրը քննաբանում է որպես քերականական, պատմական, անհատական և ծագումնաբանական հատկանիշների միասնություն, այլ կերպ ասած հեղինակային բնագրի ամբողջական բովանդակության ճշգրտում: Այս իմաստով, հերմենևտիկան էապես կիրառվել է որպես լեզվաբանական քննադատության մասնաճյուղ: Հերմենևտիկան արդի գրականագիտության վերլուծական մեթոդներից մեկն է և լայն կիրառություն ունի հետազոտության համադրական մեթոդի համակարգում (Ա. Ինձիկյան, Էդ. Ջրբաշյան, Պ. Հակոբյան, Դ. Գասպարյան...):

Ֆորմալիստական մեթոդ. – Որպես գրականագիտական մեթոդ ձևավորվել է 19-20-րդ դարերի սահմանագծում, ի հակադրություն պոզիտիվիստական և իմպրեսիոնիստական էսթետիկայի: Ֆորմալիստական մեթոդը ընդունում էր ձևի առաջնությունը բովանդակության հանդեպ: Նախապես ծագել է երաժշտագիտության և արվեստագիտության ոլորտում: Գրականագիտության մեջ առաջին հայտը Վ. Դեգելյուսի «Վեպի մորֆոլոգիայի» մասին հետազոտությունն է, որին հաջորդում են Ի. Բոդուեն դե Կուրտենի և Ֆ. Սոյուրի կառուցվածքային լեզվաբանության վերաբերյալ ուսումնասիրությունները: Ֆորմալիստական գրականագիտությունը գրական երկը դիտում է ներքին, իմանենտ օրինաչափությունների տեսանկյունից:

Ֆորմալիզմը գրականագիտական այլևայլ մեկնություններով տարածում ուներ եվրոպական և ամերիկյան երկրներում, սակայն ավելի բովանդակալից ու կենսունակ ուղղություն էր ռուս գրականագիտության մեջ, որի ականավոր դեմքերն էին Վ. Ժիրմունսկին, Վ. Վինոգրադովը, Յու. Տրնյանովը, Ե. Մելետինսկին, Բ. Տոմաշևսկին և ուրիշներ: Ծագումնաբանական և մեթոդաբանական առումով յուրահատուկ էր ռուսական ֆորմալիզմը «ձևի պոետիկայի» և «ֆունկցիոնալ պոետիկայի» տեսությամբ, որի իմաստը հանգում է ոչ թե գեղարվեստական հատկանիշի միակ ցուցանիշի, այլ որպես բովանդակային տարր, այսպես ասած, «բովանդակային ձև»: Ձևի առաջնության սկզբունքը ուղղություն էր տալիս նրանց ուսումնասիրություններին, գեղարվեստական երկի իմաստային հատկանիշները վերագրելով ձևաբանական տարրերին՝ սյուժե, սեմանտիկ խորհրդանիշ, հանգ, չափ և այլն: Տարտուի գրականագիտական խումբը Յու. Լոտմանի գլխավորությամբ, ձգտում էր ֆորմալիզմը ազատել միակողմանիությունից, առաջադրելով ձևի պատմականության տեսությունը «պատմական պոետիկա» հասկացությամբ: Ռուսական ֆորմալիզմը մեծապես նպաստել է «նոր քննադատության» (ստրուկտուրալիզմ) ձևավորմանը անգլիական և ամերիկյան գրականագիտության մեջ:

Ստրուկտուրալիզմ (ձևապաշտություն). – (ֆրանսերեն structuralisme) Գրականագիտական քննադատական մեթոդ, որ ձևավորվել է 20-րդ դարի 40-ական թվականներին, հիմնադիրը ֆրանսիացի ազգագրագետ Կ. Լևի Ստրոսն է, որը, ուսումնասիրելով ամերիկյան բնիկ ցեղերի միֆոլոգիան, հայտնաբերել է բնագրային ինվարիանտներ, լեզվական կառուցումներ, միֆի «կոլեկտիվ անգիտակցականության» պատկերացումներ (ըստ Կ. Յունգի) ժանրային ձևեր, սյուժեներ, երգեր, ծիսակատարումներ,

որոնք հիմք են տալիս միֆի կառուցվածքի հետազոտության: Կառուցվածքային վերլուծությունը երկը դիտում է ավելի մասերի ներքին կապերի հայտնությամբ, քան բովանդակային (սյուժական ատաղծի) տարրի բացահայտմամբ:

Ստրուկտուրալիզմի ծագումը առնչվում է 20-րդ դարի գիտությունների զարգացման հետ, կառուցվածքային լեզվաբաններ Ֆ. Սոսյուրի, Բոդուեն դե Կուրտենեի ամերիկյան և անգլիական լեզվաբանական դպրոցների աշխատություններում, ինչպես նաև պոզիտիվիստ փիլիսոփաներ Բ. Ռասելի և Ռ. Կարնապի տրամաբանական ուսումնասիրություններում:

Ստրուկտուրալիզմի պոետիկական գրականության տեսության բաժիններից մեկն է, որի գլխավոր խնդիրն է տեքստային բոլոր տարրերի կազմավորումը որպես գեղարվեստական ամբողջական համակարգ:

Փիլիսոփայական ընդհանուր դրվածքով ստրուկտուրալիզմը հետազոտական մեթոդ է հանդիսացել բոլոր գիտությունների համար՝ համակարգելու տվյալ գիտության ներքին կառուցվածքը: Այս իմաստով այն համակցվել է նաև մարքսիզմի հետ: Նույն համակցությունը կատարվել է նաև գրականագիտության մեջ:

Ստրուկտուրալիզմը հումանիտար գիտությունների բնագավառում նախապես կիրառվում էր բնական գիտությունների, մասնավորապես կիբեռնետիկայի և մաթեմատիկայի մեթոդաբանական դրվածքով, հանգամանք, որ առիթ տվեց իսպանացի փիլիսոփա Օրտեգա Ի Գասետին այն անվանելու արվեստի և գրականության դեհումանիզացիա: Անհրաժեշտ էր գրականագիտության մեթոդաբանական նորոգությունը հումանիտար հիմքի վրա: Այս ուղղությամբ նշանակալից եղան Մ. Ֆուկոյի, Ժ. Դերիդայի, Ու. Էկոյի փորձերը: Ստրուկտուրալիզմի որոշ ներկայացուցիչներ, ինչպիսիք են ֆրանսիացի Ռոլան Բարթը, ծայրահեղության մեջ ժխտում են գրականագիտության և քննադատության գիտական հիմունքը:

«Նոր քննադատություն» - գրականագիտական-քննադատական ուղղություն, որ ձևավորվել է 20-րդ դարակզբին անգլոամերիկյան գրականագիտության մեջ, որի հիմնադիրներն են Ա. Ռիչարդսը, Ու. Էմիսոնը: «Նոր քննադատության» տեսությունը ձևաբանված է Կ. Բրոկսի, Կ. Ուիմսատի և այլոց աշխատություններում: Ֆրանսիայում «Նոր քննադատությունը» միավորում է մի շարք ուղղություններ և ընդհանուր առմամբ ուղղված է կուլտուր-պատմական մեթոդի էմպիրիզմի և էկզիստենցիալիզմի իռացիոնալիզմի դեմ: Մեթոդի տեսաբաններն ընդունում են, որ գրական երկը ունի բովանդակային բազմաթիվ շերտեր՝ սոցիալական, հոգեբանական, փիլիսոփայական, բարոյական, կենցաղագրական և այլն, բայց դրանք ենթակա չեն գրականագիտական քննության: Դրանք կարող են հետազոտվել այլ գիտությունների կողմից: Գրականագիտության նպատակը երկի ներքին կառուցվածքային համակարգի ուսումնասիրությունն է: Այս հիման վրա են «Նոր քննադատության» տեսաբանները դիտում, որ «գրականագիտությունը պետք է գրականանա»:

«Նոր քննադատությունը» գրական երկը դիտում է որպես ինքնակա միավոր, առանց որևէ առնչության հեղինակի հետ: Նրանց մոտեցմամբ գրական երկը օտարված է նաև պատմությունից, հասարակությունից, մի-

ջավայրից: Գրական երկի գաղափարը թաքնված է ոչ թե հեղինակի կամ հերոսների դատողություններում, այլ առանձին խորհրդանիշ-բառերում, որոնք ընկալելի են ենթագիտակցաբար:

50-60-ական թվականներին հասկապես Ֆրանսիայում լայն ծավալ է ստանում «Նոր քննադատության» տեսության համակողմանի լուսաբանության ուղղությունը: Լ. Գոլդմանի «Գենետիկ ստրուկտուրալիզմ», Շ. Մորոնի «Հոգեքննադատություն», Ռ. Բարթի «Քննադատությունը և ճշմարտությունը» և այլ հեղինակների բազմաբնույթ ուսումնասիրությունները «Նոր քննադատության» պոետիկան հավելում են մեթոդաբանական նոր դրույթներով:

Դադաիզմ. – Անունը այլաբանորեն նշանակում է «մանկական թոթովանք», իսկ բառացի՝ «փայտե ձիուկ»: Ծագել է Շվեյցարիայում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և ապա լայն տարածում գտել Ֆրանսիայում և Գերմանիայում: Հիմնադիրը ֆրանսիացի բանաստեղծ Ս. Տգարան է, որի անարխիստորեն տրամադրված խումբը ելույթներ էր ունենում Ցյուրիխի կաբարետներում: Տեղափոխվելով Ֆրանսիա, Տգարան կազմում է դադաիստների նոր խումբ, որի մեջ մտնում են Լ. Արագոնը, Պ. Էլյուարը, Ա. Բրետոնը և ուրիշներ: Հրատարակում են «Դադա», «Գրականություն», «Ջրուցարան», «Հանսիբալ» հանդեսները: Ժխտելով բարոյական արվեստը՝ դադաիստները ժխտում էին առհասարակ ամեն մի արվեստ և հանգելով ամեն բանի անիմաստության՝ ջատագովում էին ալոզիկ այլախոսությունը բառերի ու հնչյունների սկանդալային զուգորդումներով: Հետագայում ֆրանսիական դադաիստները կողմնորոշվեցին դեպի սյուրռեալիզմը, իսկ առավելապես քաղաքական հակումներ ունեցող գերմանացի դադաիստները նախընտրեցին էքսպրեսիոնիզմը:

Դոգմատիկական (մետաֆիզիկական) մեթոդ. – Ա. Լունաչարսկին սահմանում էր քննադատական հինգ դպրոց՝ դոգմատիկական, իմպրեսիոնիստական, լուսավորական, պատմական, մարքսիստական²: Դոգմատիզմը երևույթները բացատրում է նախապես սահմանված, անփոփոխ բանաձևերով՝ առանց հաշվի առնելու գիտության առաջընթացի փորձառության ու կոնկրետ ճշմարտության սկզբունքը: Դոգմատիզմը էապես ժխտում է երկրի մասին զարգացման տեսությունը, անստուգելի համարելով Աստվածաշնչյան պատկերացումը: Այս իմաստով դոգմատիզմը առավելապես կրոնական սկզբունքների պայքարի ուղղություն ուներ:

Գրականագիտության մեջ դոգմատիզմը լայն կիրառություն չունի և առավելապես արտահայտվում է որպես այս կամ այն ուղղության գրական-պատմական արժեքի գնահատության չափանիշ: Սովետական գրականագիտության մեջ որոշ դոգմատիկ պատկերացումներ առկա էին ռուսաստիզմի և սոցիալիստական ռեալիզմի տեսություններում:

Իմպրեսիոնիզմ. – (ֆրանսերեն impression – տպավորություն) ուղղություն է համաշխարհային գրականության մեջ և արվեստում: Ծագել է Ֆրանսիայում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արվեստում և նկարչության մեջ: Իմպրեսիոնիզմի աշխարհընկալման ձևը տպավորականությունն է՝ օբյեկտիվ պատկերի սուբյեկտիվ ընկալումը, հպանցիկ տե-

2 Տե՛ս Луначарский А., Собр. соч., т. 8, с. 341.

սիլային ուրվագծումը:

Գրականության մեջ ուղղության գծերը արտահայտություն են գտել նատուրալիզմի (Է. Զոլա) և սիմվոլիզմի (Վերլեն) պոետիկայում: Բնորոշ է հեղինակի միտումը՝ հրաժարվել սյուժեի և պատմության առարկայականությունից և երևույթն ընկալել տեսիլային, հպանցիկ ընկալման ձևությամբ:

Իմպրեսիոնիզմի հիմնական գծերը գրականության մեջ արտահայտվել են Գոնկուր եղբայրների «Դնննիկ» («Օրագիր») գրքում, որի նշանաբանն է «Տեսնել, զգալ և արտահայտվել – ահա և ամբողջ արվեստը»: Իմպրեսիոնիզմի հատկանիշներն առկա են նաև Արթուր Շնիցլերի դրամատուրգիայում:

Իմպրեսիոնիզմի փիլիսոփայական հիմունքը ռացիոնալիստական իդեալիզմն է՝ ի հակադրություն նյութապաշտ մատերիալիզմի՝ բացահայտելու կերպարի իռացիոնալ ակնթարթային երևույթի խորհրդանշային պլաբանությունը: Այս իմաստով իբրև ոճավորում իմպրեսիոնիզմը վերլուծական եզրեր ունի լեզվաբանական, հոգեվերլուծական, նշանագրային մեթոդների հետ:

Հայ գրականության մեջ իմպրեսիոնիզմը արտահայտություն է գտել Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներում», Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» նովելաշարում, Միք. Մանվելյանի «Էսքիզներ» ակնարկներում: Իմպրեսիոնիստական պատկերավորման փայլուն նմուշ է Վ. Տերյանի քառատողը.

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի սովեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիկ շոյելով.
Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ձերմակ շորերով...

Պատմահամեմատական մեթոդ. – Մեթոդի ծագումը նախնական դրվածքով վերագրվում է 19-րդ դարակեսին գերմանացի բանասեր Տ. Բենֆեյի բանահյուսական հետազոտություններում՝ ի հայտ բերելով սյուժեների ու կերպարների ընդհանրությունը ամենատարբեր ժողովուրդների մշակույթում: Սակայն հայտնությունն այդպես էլ մնաց որպես դիտարկում՝ չստանալով գրականագիտական հետազոտության յուրահատուկ մեթոդ, առանց բացահայտելու սյուժետային ընդհանրությունների գենետիկա-ծագումնաբանության հիմունքները: Գրականագիտության հետագա զարգացումը, մասնավորապես պոետիկայի, լեզվական ատաղձի և միֆոլոգիական հետազոտությունները, ընդհանուր օրինաչափություններ բացահայտեցին տարբեր ժողովուրդների մշակույթում, որը հիմք հանդիսացավ պատմահամեմատական մեթոդի ձևավորմանը: Առավելապես արգասավոր եղավ պատմական պոետիկայի ուսումնասիրությունը: Պատմահամեմատական մեթոդի գիտականացման գործում էական նշանակություն ունեցան նաև մարդկային հոգեբանության նմանակության վերաբերյալ ուսմունքը (Խ. Շտեյնտալ, Մ. Լապարուս), նախակենցաղ ժողովուրդների անխմիստական ընդհանրությունը (Է. Թայլոր) և Ա. Լանգեի անտրոպոլոգիզմը: Պատմական պոետիկայի ուղղությամբ նշանակալից եղան Ա. Վեսելովսկու և Ա. Պոտեբնյայի ուսումնասիրությունները:

Հայ գրականության մեջ պատմական պոետիկայի տեսակետից, այսպես ասած, միջազգային սյուժեներ են դիտարկվել «Խոսքով և Շիրին», «Սասնա ծռեր» վիպասերում, «Քաջ Նազար» և այլ հեքիաթներում:

Պատմահամեմատական մեթոդը արդի գրականագիտության հետազոտական բաղադրիչներից է:

Կոմպարատիվ մեթոդ. – Անվանումը լատինական comparativus (համեմատություն) արտահայտությունից է: Ընդհանուր առմամբ էմպիրիկ տարբերակն է պատմա-համեմատական մեթոդի և դիտարկում է նմանությունները ազգային գրականություններում և առանձին գրողների երկերում՝ պատմականությունից, աշխարհաքաղաքային և ոճային առանձնահատկություններից դուրս: Լայն տարածում ունեն խորհրդային գրականագիտության մեջ՝ գրական կապեր դրվածքով: Հայ գրականագիտության մեջ այդ ուղղության հետևորդներն են Գ. Հովսեփյանը, Ս. Դարոնյանը, Լ. Մկրտչյանը և ուրիշներ:

«Գրական կապերը» խորհրդային գրականագիտության գլխավոր ուղղություններից է և առանձին բաժին էր զբաղեցնում միութենական հանրապետությունների գրականության ինստիտուտներում: Գաղափարական ելակետը ժողովուրդների բարեկամության սկզբունքն էր, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական դրույթով:

Փիլիսոփայական մեթոդ. – Փիլիսոփայությունը կոչվում է նաև գիտությունների գիտություն, այսինքն՝ նա կազմավորում է այնպիսի ընդհանուր օրինաչափություններ, որոնք բնորոշ են բոլոր գիտություններին՝ բնական և հասարակական: Այս իմաստով հետազոտական ուրույն ձևույթ են արտահայտում բնության փիլիսոփայություն, պատմության փիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, արվեստի փիլիսոփայություն հասկացությունները: Գերմանական փիլիսոփայական էսթետիկայում (Հեգել, Շելլինգ), գրականության փիլիսոփայությունը ածանցված է արվեստի փիլիսոփայություն ընդհանուր հասկացության մեջ: Հետագայում որոշ փորձեր կատարվեցին առանձնացնելու գրականության փիլիսոփայություն հասկացությունը («գեղարվեստի փիլիսոփայություն»), որը, սակայն, որոշակի տեսական հիմնավորում չստացավ գիտությունների փիլիսոփայության համակարգում:

«Գրականության փիլիսոփայություն» կապակցությունը հայ գրականագիտության մեջ ձևակերպվեց 20-րդ դարասկզբին Արսեն Տերտերյանի ասույթներում, որը, սակայն, մոռացության տրվեց խորհրդային գրականագիտության մեթոդաբանական որոնումներում: Փորձեր եղան գրականության փիլիսոփայական վերլուծության (Խ. Սարգսյան, «Վահան Տերյան», «Լևոն Շանթ»), սակայն որպես գրականագիտական մեթոդ ձևավորվեց անցյալ դարի 80-ական թվականներին (Ս. Սարինյան «Ինչ է գրականության փիլիսոփայությունը»):

Լեզվաբանական մեթոդ. – Լեզվաբանական մեթոդը և հատկապես կառուցվածքային լեզվաբանությունը որոշիչ նշանակություն է ունեցել գրականագիտական մեթոդների կազմավորման գործում՝ սկսած էկզեգետիկայից մինչև «Նոր քննադատություն» (ստրուկտուրալիզմ): Գրականագիտության համակողմանի առնչությունը լեզվաբանության հետ դիտելի է

ոչ միայն կոմունիկատիվ, հաղորդական հիմունքով, այլև լեզվի ընդհանուր կառուցողական նշանակությամբ, որպես խոսքի և գրական հերոսի առնչակցություն: Ֆիլոլոգիական ընդհանրությունը հատկանշում է գրականագիտության և լեզվաբանության անխզելի կապը, որի հայտարարն է բնագիրը և բնագրի քննադատությունը: Լեզվաբանական բնագիրը պայմանավորում է գեղարվեստական բնագրի կառուցվածքն ըստ ժանրային ձևայինների և հեղինակային մտադրությի:

Կոնստրուկտիվիզմ. – Փիլիսոփայական ընկալմամբ՝ «գենետիկ մեթոդ»: Գիտական տեսությունների դեդուկտիվ կառուցվածքի միջոցներից մեկն է: Գաղափարը ծագել է Գիլբերտի, Բրաուերի, Կոլմազորովի, Մարկովի և այլոց աշխատություններում: Փիլիսոփայական դրվածքով մեթոդը կիրառվում է որպես կառուցողական գործոն՝ հասնելու մաթեմատիկայի և տրամաբանության աքսիոմատիկ հիմունքների բացահայտման: Մեթոդն այժմ կիրառվում է ֆորմալ գիտությունների բնագավառում:

Գրականագիտության մեջ որպես գեղագիտական ոճ և էսթետիկական ուղղություն ծագել է 20-րդ դարի 20-ական թվականներին ինդուստրիալ կուլտուրայի զարգացման հետևանքով: Որպես պոետական հոսանքի կոնստրուկցիա գիտակցվել է Կ. Ջելինսկու, Ա. Չիչերինի դեկլարացիաներում, ապա նաև ՄԵՓ-ի «ձևերի հեղափոխություն» կողմնադրում: Ընդհանուր դրվածքով կոնստրուկտիվիզմը հրաժարվում է արվեստի հին սենտիմենտալ ձևերից և ձգտում յուրացնել հեղափոխական արվեստի ձևերը: Շարժումը դադարում է գրական խմբակցության վերացման հետ 30-ական թվականներին:

Համադրական վերլուծության մեթոդ. – Գրականագիտության առնչությունները բնական և հասարակական գիտությունների հետ տեսականորեն գիտակցվել են նախապես (պատմություն, ազգագրություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, լեզվաբանություն և այլն), սակայն գրականության վերլուծությունները կատարվել են ըստ մեթոդների: Անցյալ դարի 60-80-ական թվականներին, երբ առավել որոշակի գիտակցվեցին այլ գիտությունների մեթոդաբանական առնչությունները, գրականագիտության մեջ ձևավորվեց համադրական վերլուծության մեթոդը, որը համադրում է գրական երկի բովանդակային բոլոր շերտերի գեղարվեստական ընդհանրությունը և բացահայտում նրա փիլիսոփայական հայտարարը:

Մեթոդի գիտական ճանաչմանը սկիզբ է դրել 1963 թվականին Լենինգրադում կայացած սիմպոզիումը (գիտաժողով), որին մասնակցում էին գրականագետներ, արվեստաբաններ, փիլիսոփաներ, կիբեռնետիկներ, ֆիզիոլոգներ և այլն, որի արդյունքները հրատարակվել են «Գիտությունների բարեկամությունը և ստեղծագործական գաղտնիքները» (1968) գրքում: Բացահայտելով գրականության իմացական ու գեղագիտական համարժեքների ամբողջությունը՝ համադրական վերլուծության մեթոդը տեսական բարձր մակարդակ է նշանավորում գրականագիտության մեջ և ընդլայնում հետազոտական որոնումների շրջանակը: Հայ գրականագիտության մեջ համադրական վերլուծության մեթոդը կիրառել են Հ. Օշականը, Ա. Տերտերյանը, Ս. Աղալարյանը, Էդ. Ջրբաշյանը, Հր. Թամրազյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Սարինյանը:

Գեղագիտական մեթոդ. – Փոխաբերվում է նաև գրական քննադատության ընդհանուր հասկացությամբ: Ծագում է հունարեն *kritike* բառից, որը նշանակում է մեկնել, քննել: Գրականագիտության ուղղություններից մեկն է և գրական ընթացի անմիջական արձագանքը: Զարգացման ընթացքի հետ ներառնում է նաև գրականության պատմությունն ու տեսությունը: Գեղագիտական մեթոդի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նա գրական երևույթները քննաբանում է սոցիալական, հասարակական կապերից դուրս, ի տարբերություն կենսագրական, կուլտուր-պատմական և այլ մեթոդների: Այս իմաստով գրական քննադատության ընդհանուր կազմում գեղագիտական մեթոդը առընչակցվում է «մաքուր արվեստի» կամ «արվեստ արվեստի համար» տեսությանը: «Մաքուր արվեստի» տեսությունը ձևավորվել է 19-րդ դարակեսին ի հակադրություն մատերիալիստական դրապաշտության ուտիլիտար արվեստի: Տեսությունը ժամանակին գիտակցվել է նաև հայ իրականության մեջ (Մ. Նալբանդյան): «Գեղեցիկը կյանք է» բանաձևին հակադրվում է վերնյութական, վերացական, ինքնաբավ գեղեցիկի տեսությունը:

«Մաքուր արվեստի» կամ «արվեստ արվեստի համար» տեսությունը հայ գրականության մեջ ձևավորվեց 20-րդ դարակեսին՝ Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» (1908) հանդեսով: Գեղագիտական մեթոդը նկատելիորեն երանգավորեց հայ գրականագիտությունն ու քննադատությունը, սակայն չկազմավորեց առանձին ուղղություն: «Մաքուր արվեստի» փոխաձևությամբ, մեթոդը գիտակցվեց որպես գնահատության չափանիշ և արվեստի իդեալ:

Նշանագիտական մեթոդ. – Նշանագրությունը (*semiotics, Semiotic, семиология, семиотика*) հիմնվել է կառուցվածքաբանության դրույթների վրա, սակայն այն տեքստի վերլուծության ավելի ամբողջական ու համապարփակ «գործիքներ» ու մոտեցումներ է առաջարկում: Նշանագիտական մեթոդը կառուցվածքաբանական «կամերային» վերլուծությունների հաղթահարման արդյունք է:

Նշանագիտությունը (հուն. *semeion*-նշան) գիտություն է, որն ուսումնասիրում է նշանային համակարգերը, դրանց հատկությունները, գործառությունը, նշանները հաղորդակցական պլանում, դրանց բնույթն ու տեսակները: Նշանագիտության հիմնադիրներն են լեզվաբան Ֆ. Սոսյուրը (Ֆրանսիա, 1857–1913) և Չ. Ս. Պիրսը (ԱՄՆ, 1839–1914):

Սոսյուրը «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց»-ում նշում է, որ բոլոր կարգի համակարգերից նշանների համակարգը ամենակարևորն է: Նա ընդհանրություն է տեսնում լեզվի՝ իբրև նշանային համակարգի, և այլ նշանային համակարգերի միջև, լեզվով կարելի է բնորոշել մյուս նշանային համակարգերը:

Սոսյուրը նշանագիտությունը համարում է նոր գիտություն, որն ուսումնասիրում է նշանների գործառությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, որը կարելի է անվանել նշանաբանություն՝ սեմիոլոգիա:

Նշանագիտության ճշգրիտ իմաստը որոշելը հոգեբանների խնդիրն է, իսկ լեզվաբանները պետք է սահմանեն, թե նշանաբանական իրողությունների ամբողջությունից ինչն է լեզուն առանձնացնում որպես առան-

ձին համակարգ, ինչպես և այն, որ նշանագրությունը հեռանկար է բացում նաև այլ գիտություններում (օրինակ՝ գրականագիտություն, ազգագրություն, կենսաբանություն, հոգեբանություն, քաղաքագիտություն և այլն):

Խիստ արդյունավետ կլինի, եթե նշանագիտությունը և ժամանակակից հումանիտար գիտությունների մեթոդները դառնային հայագետների աշխատանքային «գործիքները», որոնց շնորհիվ պարբերաբար նկարագրվեր ու մեկնաբանվեր հայ գրականությունը՝ իր հարուստ «նշանային» նյութով, նոր լույսի տակ կներկայացվեին հայ բազմադարյա մշակույթում ու գեղարվեստական ստեղծագործություններում ծածկագրված իմաստները:

Արդի հայ գրականագիտության մեջ նշանագիտության հետազոտողն ու տեսաբանը Տիգրան Սիմյանն է («Գրականագիտության «գործարանը». մեթոդ, տեքստ, ընթերցող, մեկնաբանող»: (Ուսումնամեթոդաբանական ձեռնարկ):

Վերջում անհրաժեշտ է նշել, որ գրականագիտության հիմնական մեթոդները ածանցվել են որոշ իմաստով էմպիրիկ տարբերակով, կամ ուղղակի հակադարձելով մեթոդի գլխավոր դրույթը, կամ լրացնելով այն այս կամ այն հատկանիշի ուրույն մեկնությամբ: Այդ կարգի հավելյալ մեթոդներից են միֆաքննադատությունն ու միֆապոետիկան, հետկառուցվածքաբանությունը և այլն:

Սերգեյ Ն. Սարինյան – գրականության պատմաբան՝ տեսակա-նացված պատմության առանձնահատկությամբ: Գիտական հետաքրքրությունները ներառում են գրականագիտությունը հումանիտար գիտությունների համակարգում, գրականագիտության մեթոդաբանության հարցերը՝ գրական ուղղությունների տիպաբանությունն ու պատմագեղագիտական հիմունքները, գրականության փիլիսոփայությունն իբրև հետազոտության մեթոդ:

Summary

LITERARY METHODS

Sergey N. Sarinyan

Key words – method, exegetics, structuralism, mythology, poetics, philosophy, linguistics.

Methods of the formation of literature are double.

1. **Creative method**, which characterizes literary movements and trends, such as classicism, romanticism, realism, symbolism and naturalism.

2. **Scientific method**, which covers political, theoretical and historical issues in the literature.

This article is devoted to the systematization of literary methods from exegesis to semiotics. Methods are described following their origin, epistemological value and practical significance.

ЛИТЕРАТУРОВЕДЧЕСКИЕ МЕТОДЫ

Сергей Н. Саринян

Ключевые слова – метод, экзегетика, структурализм, мифологизм, поэтика, философия, лингвистика.

Методы формирования литературы двойные.

1. **Творческие**, которые характеризуют литературные движения и течения, такие как классицизм, романтизм, реализм, символизм и натурализм.

2. **Научные**, которые охватывают политические, теоретические и исторические вопросы в литературе.

Эта статья посвящена систематизации литературоведческих методов от экзегетики до семиотики. Методы описываются исходя из их происхождения, эпистемологической ценности и практического значения.

ՀԻՄՆԱԳԱՐՈՒՄ

ԹՎ (ՃԵ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽԱՆՎԱՐ-ՆԱՐԱՐ, 2017

ՎԼՎ ԽԱՆՎԱՐՈՒՄԻ ԽԱՆՎԱՐ